



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

22864 -  
22840

378  
d-79

50

Printed in Turkey

2002

001

ԲՆԵՆԻՏԱՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒ ՄԻՋ  
ԱԶԲԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐԵԼԵԳՐՈՒԹՅԱՆ

**ԵՒ**

ՀԱՅՈՒՆ ԱՐՃՍՏԵՑ ՄԷՋ  
ՅԵՏԵԳՐԵԼՈՒՆ ՊԵՏԱԿԱՆԵՐԸ

*Արքեպիսկոպոս Թեա  
Կաթողիկոս Զ. Կարապետ*

*Կ. Ս. Մոսկով...*

1872

8173

ԻՆՆԵՏԱՍԵՐՈՐԴ ԴՍՐՈՒՄ ՄԷՋ  
ԱՇԻԱՏՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ  
ԵՒ ՀԱՅՈՒՆ ԱՐՀԵՍՏԻՅ ՄԷՋ  
ՅԵՏԱԴԻՄԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ



# ԱՏԿԱՆՈՍՈՒՄԻՔԻՆ

ԱՐՏԱՍԱՆԵԱՅ

Պ . Յ . ՎԱՐԴՈՎԵԱՆ

ՕՍՄԱՆԻԷ ԹԱՏՐՈՆԻ ՍՐԱՀԻՆ ՄԷՋ  
1872 ՓԵՏՐՎԱՐ 14Ի ԻՐԿՈՒՆԸ



Տիկնայք և Պարոնայք

6741-52

Անկարելի է որ ատենաբան մը՝ աշխատութեան խնդրոյն վրայ խօսի կամ նորա վերջին դարուս մէջ ըրած հսկայաքայլ յառաջդիմութեան զանազան կողմերը ունկնդրաց երևակայութեան ներկայացընելու փորձ փորձէ, առանց նախապէս դաստիարակութեան կենսական խնդրոյն վրայ ճառելու: Եւ արդարև՝

ներկայ դարուս մէջ, գաստիարակութիւն  
 և աշխատութիւն՝ այնքան սե՛րտ կապակ-  
 ցութիւն մը հաստատած են իրենց մէջ,  
 որ դրեթէ նոյնացած են, և միմեանց հիմն  
 դարձած. այնպէս որ՝ անհնար է բաժնել  
 ասոնք իրարմէ, առանց երկուքն ալ ա-  
 պարդիւնաւորելու, առանց երկուքն ալ  
 անդամալուծելու:

Ապացոյց՝

Իւսկիւտար Սէլիմիէի աւերակ դար-  
 ցած գործարանաց շարքերը՝ որոնք երբեմն  
 լուսով և կենդանութեամբ կը շողային,  
 որոնց թէզիկեահներուն և մէքիքներուն շա-  
 ուղիւնը՝ երբեմն անցորդները կը հրճուե-  
 ցընէր և զօրս՝ աւա՛ղ, գերեզմանական  
 լուսութիւն՝ և տխրութիւն մը կը պատէ  
 այսօր: Որոնք երբեմն մեր տուները կը  
 դարդարէին՝ իրենց հաստատուն չիթերովը,  
 խութիւններովը, յաւերժական թաւշեայ  
 չաթմաններովը և այլն. եւ որոնք այսօր  
 ցաւալի յիշատակութիւն մը միայն թողած  
 են մեզ, իրենց թէզիկեահներէն ելած՝ կէս-  
 դարեան բարձերուն և բազմայնորուն վայ-  
 լուն գոյներովը, որ կարծես բնութեան ան-

դառնալի օրինաց դէմ մաքառելով՝ չը հին-  
 նալ և չանցնիլ կը ճգնին:

Ապացոյց՝

Միայն Գամասկոսի մէջ գտնուած  
 20,000 էն աւելի՝ խումաշի թէզիկեահներէն՝  
 500 հազիւ մնացած ըլլալը:

Ապացոյց՝

Յէնի գարուի, Շէմսի բաշայի, և Լթ-  
 մէյտանիի պամահանէները, որոնք երբեմն  
 դրեթէ բոլոր Թուրքիոյ կարասիք: և հա-  
 դուստ կը մատակարարէին, և որոնց հետ-  
 քըն հազիւ կը տեսնուի այսօր:

Եւ ինչո՞ւ այս յետադիմութիւնը. —  
 վասն զի՝ ներկայ դարս վճռած է՝ որ առանց  
 գաստիարակութեան ամեն աշխատութիւն  
 ապարդիւն մնայ, ինչպէս նաև ամենալաւ  
 գաստիարակութիւնն առանց աշխատու-  
 թեան: Այս վերջին առարկութեանս ալ՝  
 կենդանի ապացոյց է, մեր Հայազգի, առա-  
 ւել կամ նուազ գաստիարակեալ երիտա-  
 սարդաց խումբը, որոնք յակամայից՝ և  
 առ ի չգոյէ աշխատութեան, կը մոռնան  
 բոլոր այն ուսմունքներն ու գիտութիւնք՝  
 որոնցմով իրենց երեւակայութիւնը զսը-

դարելու, սիրտը կրթելու և միտքը մշակելու համար՝ այնքան ժամեր և ստակներ վատնած և այնքան քրտինք թափած են .. :

Բայց որովհետև դաստիարակութեան վրայ չը դրող գրէչ, չը խօսող լեզու, ինչպէս նաև՝ այս խնդրոյն նկատմամբ, լրածաներէն կամ կարդացածներէն չուռեցած գլուխ՝ խիստ դժուար է գտնել ազգին մէջ, չեմ ուզեր ա՛լ աւելի ծանրաբեռնել ազնիւ ունկնդրացի ուղեղները և կը դառնամ աշխատութեան խնդրոյն :

Շատերն փորձած են եզրակացնել մարդուս էութիւնը. եթէ ես ալ համարձակէի երբէք եզրակացնել զանի, սահման մը տալ անոր, «աշխատող էակ մը», կը կոչէի զայն : Եւ արդարև՝ ի՞նչ է աշխատութիւնը. — մտային կարողութիւններէ՝ ուրիշ բանով ըսելու համար, դաստիարակութենէ առաջնորդեալ այն գործողութիւնը՝ որով մարդս պէտքերու ճակատագրէն ինքզինք կազատէ :

Աշխատութեամբ է որ մարդս հասած է կատարելութեան այն աստիճանին՝ որու մէջ կը գտնուի այսօր. ինչպէս նաև աշխա-

տութեամբ միայն պիտի կարենայ երթալ մինչ ի այն կէտը՝ որուն սահմանած են զինքը յառաջդիմութեան օրէնքները :

Ուստի ամեն անգործ մարդ, ո՛վ որ ալ ըլլայ, ի՞նչ աստիճանէ ալ ըլլայ, ի՞նչ անուն կա՞մ ի՞նչ տիտղոս ալ որ կրէ . . . միայն իւր անգործ ըլլալուն պատճառաւ՝ դաւաճան մ'է մարդկային այն ճակատագրին, որ գործել կը հրամայէ մեզ, և անդադար գործել . . . :

Կուզէ՞ք որ պատմութեամբ ապացուցանեմ ըսածներս, լաւ ուրեմն. բանանք անոր ամենէն առաջին էջերը մեր երևակայութեան առաջ և հանդիսատես ըլլանք առաջին մարդուն, մուրակիս վրայ ի տես դալու տեսարանին : Ի՞նչ տեսակ արարած է այդ, և ի՞նչ կրնէ իւր գոյութեանը իրեն ազգած զարմացմանէն՝ սակաւիկ մի սթափած վայրկեանին . . . :

Վերջապէս ի՞նչ էր մարդ կոչածնիս իւր սկիզբէն : — Անշուշտ անասնոց կարգի առաջին աստիճանին պատկանող ըստնաւորայ մասնաւոր մէկ տեսակը, զորն որ կարծես հրելով ձգեր են մուրրակիս վրայ,

այնպիսի վայրկենի մը յորում կը թուի թէ՛ բնութիւնը զանի ընդունելու ո՛չ ընաւ պատրաստութիւն ունէր , և ո՛չ ալ տրամադրութիւն :

Պէտք է ապրի նա աշխրիս ամեն կողմերը՝ ամեն կլիմաներու տակ և ոչինչ կը կրէ իւր մարմնոյն վրայ՝ պաշտպանելու համար զինքը մթնոլորտին յարձակումներէն : — Պէտք է քայլէ նա , սակայն իւր ուղղահայեաց դրութեամբը՝ երկու նուրբ կէտեր միայնչունի իրեն յենարան՝ այնպէս որ իւր քայլերը . ինչպէս կըսէ զիտնական անդրիացի մը , իյնալ և ելլելու շարունակութիւն մ'է : Որովհետև մարդս չունի այն կարողութիւնը՝ որով ուրիշ կենդանիներ իրենց ծննդեան օրէն իսկ կսկսին քայլել . և մեր մանկութիւնը՝ դէթ միամեայ վարժութեան պէտք ունի , երկու ոտքով քայլելու բաւական դժուար արհեստը ուսնելու համար :

Պէտք է կերակրի նա . և բնութիւնը թէ բուսական և թէ մտերէն սնունդներ՝ առատօրէն դրած է իւր առաջ , բայց , աւանդ , ինքը ո՛չ ոչխարի կամ ցուլի մը կազ-

մութիւնն ունի , որ կարենայ անասնոց պէս արածիլ , և ո՛չ ալ մտակեր կենդանեաց տրողընթացութիւնն ունի , որ կարենայ իւր կենդանի ճաշին ետեւէն հասնիլ : Աստի և դատապարտեալ է խեղճը՝ այնպիսի որսերու ետեւէն իյնալ՝ որոնք կամ իրմէ աւելի ոտքեր ունին , և իրմէ արագ կը վազեն , և կամ թևեր ունին սւ յօգս կը սրանան . որով ուրիշ բան չմտար իրեն ընելիք բայց միայն դարանակալ սպասելով՝ անվերջանալի ծով մը պահել :

Արեւմն մարդս այդ վիճակին մէջ , և այդ վայրենի երկրին վրայ՝ շատ պատճառներ և իրաւունք ունէր խորհելու թէ բնութիւնը հեղնութիւն մը ընել ուզած է զինքն յէութիւն կոչելով . . : Սակայն երկու անմեկնելի մատուք կային իւր կազմութեանը մէջ , որ անտարակոյս խորհելու առիթ տուած են առաջին մարդուն : Ստոնք այն երկու յաւելածներն էին , որոնք մարմինէն վար կախուած կը տարուբէրէին , առանց բնաւ տեսական՝ կամ գործնական օգտակարութիւն մը ունենալու և իրօք ալ . . . ինչ բանի կրնային արդեօք



ճառայել այս երկու առեղծուածային ճօճանակները, զորս բազուկ անուանած ենք մենք: — Ոչ քալելու դիւրութիւն մը կրն՝ ծայէին, ո՛չ իւր ընթացքը արագացընելու կը նպաստէին և ոչ ալ իւր էութեանը դէմ երգուեալ տեսանելի և անտեսանելի թըշնամիներէն՝ իւր անձը պաշտպանելու կօդնէին:

Ս.Յ. օ՛ր մը վեր կառնու այս անօդուտ կարծուած առեղծուածային ճօճանակներէն մին, կը դնէ ձեռքը իւր ճակտին վրայ և . . . մտածութիւն կը ցայտի, խորհուրդ կը բղխի անկէ դուրս: Սթէնաս դուրս հուզայ սպառազէն: Ս.Յ., պիտի ապրի նա և ոչ միայն պիտի ապրի՝ այլ և իրեն պիտի հպատակեցնէ երկրիս վրայ գտնուած բոլոր արարածները: Հիմայ կրնայ վերառնուլ, բարձրացնել ձեռքը, այն մտի կտորը, զոր աւագի հատ մը կարող էր խորասուկել. հիմա կրնայ զանի բարձրացընել ի նշան իւր ապագայ մեծութեանը: Ասան զի՛ օր մը պիտի դայ՝ յորում կենդանի նիւթոյ այս նշխարը՝ մտի այս մէկ փոքրիկ մասը՝ բոլոր աշխարհ մը պիտի կրէ իր մէջ, և

շանթեր ու կայծակներ պիտի արձըկէ տիեզերաց վրայ:

Որովհետև դիտէ՞ք ինչ բան է ձեռքը մեքենական ճարտարութեամբ կատարելութիւն մը, մեքենականութեան գլուխգործոց մը, զոր երբէք Վ.օքանսօն մը՝ իւր ամենէն աւելի արամադիր ու ներշնչեալ վայրկենին իսկ, երազել անգամ չը պիտի համարձակէր:

Տեսէք սնդամ՝ մը սա չորս երկայն մատերը՝ որ կը հեռանան, կը մերձենան, կը գոցուին, կը կծկուին, կը բացուին, և ամենքը մեկանց բթամատին կը պատասխանեն: Տեսէք նաև սա բթամատն ալ, որ թէ ասոնց ամենուն, և թէ՛ ի մասնաւորի, սոցա ամեն մէկին ո՛րքան մեծ վայելչութեամբ ու որադութեամբ կը պատասխանէ և ըսէ՛ք ինձ, իրաւացի չէ՞ մի, ճշմարիտ չէ՞ մի պարոն Տիւշէն մեծահամբաւ անդամաղնին խօսքը՝ թէ չորս երկար և մէկ կարճ մատերէ բաղկացեալ այս ձեռքը՝ շարժումներու այնքան մեծ, անհուն և անսահման զօրութիւն մը ունի՛ զոր ու-

րիչ որ և է մարմինէ կամ մէքէնայէ անհր-  
նար է ընդունիլ :

Ձեռքը մեր առաջին դործիքն է ,  
ձեռքը մեր կենդանի դործիքն է , և անով  
ստեղծած ենք , անով շինած ենք բոլոր  
մեր աշխատութեան դործիքները , փայ-  
տահարին կացինէն՝ մինչև որմնադիրին  
ծեփիչը , փիլիսոփային կամ բանաստեղ-  
ծին գրչէն՝ մինչև զօրականին սուրը , պա-  
տկերհանին վրձինէն մինչև աստղաբաշխին  
հեռադիտակը , քէմանանուագին լարէն՝  
մինչև քանդակագործին դրիչը . և ասոնց  
ամենը՝ իբրև յաւելուածներ իւր բնական  
գործարանացը կ'առնու՝ կամ կը թողու ,  
ուղած վայրկենին և աշխատութեան ան-  
սակին պահանջմանցն համաձայն :

Եւ մարդիկ ալ , թէ հին ատենները՝  
և թէ մեր օրերը , լաւ ճանչնալով այս ան-  
դամին օգտակարութիւնն ու ազնւութիւնը՝  
'ի նշան իւրեանց երախտագիտութեան ,  
միւս բոլոր անդամներէն վերապատիւ դա-  
սած են զայն . ուստի՝ երբ մարդս համակ-  
րութիւն յայտնել ուզէ՝ իր մէկ բարեկա-  
մին ձեռքէն կը յանձնէ՝ սրտին այս յանձ-

նարարութիւնը . ողջ ունելու կամ մեկնելու  
ատեն , ձե'ռքը կը կարկառէ իր բարեկա-  
մին : Նշանեալը՝ իր ձե'ռքը կընծայէ հար-  
պընցունին՝ երբ ցկեանս նորա հետ միանա-  
լու համար , քահանային կամ խորանին  
առաջ կը մերձենայ . . . :

Աշխատութեան օրէնքն այսպէս է .  
դուլսը կը խորհի և ձեռքը կը գործէ , զի  
ձեռքը ուղեղին մէկ յաւելուածն է , ու-  
ղեղին գործադիր մարմինն է . և այս օրի-  
նօք է ահա՝ որ մարդս դարէ 'ի դար աւելի  
յառաջգիմելով ու կատարելագործուելով՝  
այս աւուր մեր տեսած այս նոր աշ-  
խարհը հանած է իւր ուղեղէն՝ զոր հինին  
հետ բաղդատելով , կրնանք ամենայն ի-  
րաւամբ «մարդուն աշխարհը» կոչել :

Եւ արդարև երբ աչքս կը դարձընեմ  
բոլոր այն մեծագործութեանց վրայ՝ զորս  
մարդկային հանճարը թողած է դարերէ  
'ի վեր , և երկրիս ամեն կողմերը , երբ  
հայեացքս կուղղեմ այն ամեն հրաշալեաց  
վրայ , զորս նոր 'ի նորոյ կտանդէ այսօր  
մարդկային հանճարը , ինքնիրենս կըրօմ ,  
և անշուշտ դուք ալ իմ հետ կըրօք՝ օրհ-

նեա՛լ ըլլայ Աստուածային այն օրէնքը՝ որ  
 'ի պատիժ սկզբնական մեղաց , աշխատու-  
 թեան փառաւոր պարտքը դրած է ,  
 մարդկութեան վրայ :

Աստուած մարդս ստեղծած ատեն՝  
 անկատար թողած է զայն և ըսած է իրեն  
 Դու ինքնի՛ն կատարելագործուէ ո՛վ մարդ :  
 Ես քու նախատիպդ միայն պատրաստեցի ,  
 որպէս զի՛ քեզ թողում այդ նախատի-  
 պէն՝ համայն արարածոց նախադաս էակ  
 մը յառաջ բերելու , փառքն ու արժա-  
 նիքը . էակ մը՝ որուն վրայ նայելով ես  
 ինքս սքանչանամ , էակ մը՝ զոր քու հան-  
 ճարոյդ հայելոյն մէջ դիտելով , դու իսկ  
 հիանաս :

Եւ եթէ դեռ կը դանուին մարդիկ՝  
 որ մարդկային հանճարոյն ամենամեծու-  
 թեան վրայ կը տարակուսին , անոնք ներ-  
 կայ դարուս մարդիկը չ'են , անոնք չ'ե՛ն  
 այցելած բնաւ , եթէ ոչ Եւրոպիոյ , գէթ  
 Զէյթին պուրնուի , Թօփհանէի , Թէր-  
 հանէի , Հէրէքէի , Իզմիտի և այլն դորժա-  
 րանները , անոնք չեն մտած բնաւ հեռադ-  
 րատան մը մէջ , անոնք չեն ճանրորդած

բնաւ շողեկառքով , շողենաւով կամ  
 թռամուէի կառքերով , անոնք չեն տեսած  
 անշուշտ 67ի Բարիզու արուեստահանդէսը  
 կամ գէթ 63ի Պոլսոյ արուեստահանդէսը՝  
 'ի փառս աշխատութեան և 'ի պատիւ աշ-  
 խատարաց կարգին կառուցեալ , այն  
 շղեղափայլ և վեհապանծ տաճարները ,  
 և չեն դիտած նոցա մէջ գործուած հրաշք-  
 ները , այո՛ , ճշմարիտ հրաշքներ , որոնք ու-  
 րիշ հրաշքներու չափ յարգելի են մեզ  
 համար . . . :

Աննետատերորդ դարը անցեալ ամեն դա-  
 րերէ աւելի նպատած է մարդկութեան  
 յառաջդիմութեանը՝ կամ ըսեմ , նիւ-  
 թական կենաց բարդաւաճմանը , վասն զի  
 այս դարը ամեն դարերէ աւելի իմացական  
 կեանք , ամեն դարերէ աւելի բարոյական  
 կենաց հմտութիւն և վերջապէս ամեն դա-  
 րերէ աւելի լոյս բաշխած և ծաւալած է  
 աշխարհիս :

Կային՝ և դեռ ևս դանուին դեռ  
 այնպիսիք ալ՝ որ այս դարս անկման  
 դար կոչեն , բայց ո՛վ են ատոնք—միջին  
 դարէն մնացած կուսակցութիւն մը , որ

անկման իրաւունքն իսկ կորուսած է, քանզի արդէն անկե՛ալ է նա և կործանեալ: Ա՛լ այդ կուսակցութիւնը ստուերաց աշխարհին մէջ, պարզ ստուէր մ'է: Ուրեմն իրե՛նն ըլլայ գիշերը և մեզի լոյսը . . . :

Եւ ո՞ր դարը քրած է երբէք այսչափ պետական հարուածներ բնութեան դէմ, ո՞ր դար կարող եղած է բարդե՛լ այսքան դիւտ գիւտի վրայ:

Մեր դա՛րը հնարեց շոգին, մեր դա՛րը հնարեց կաղը, ելեք դրական հեռադրութիւնը, վերջապէս մեր դա՛րը հնարեց կամ կատարելադործեց բոլոր այն հրաշալիքները՝ որոնք կարկուտի պէս կը տեղան մեր վրայ, Եւրոպական երկնքէն, և զորս սքանչացմամբ ու հիացմամբ կը դիտենք մենք:

Օր մը՝ երեւիլի դիտնական մը ցնդելով շոգի դարձած ջրոյ մէկ կաթիլին տնբաւ զօրութիւնը կը գտնէ: Իրեն այնպէս կը թուի թէ իւր այս գիւտին օգնութեամբ բոլոր աշխարհս պիտի կերպարանափոխէ, ուստի վեհապետաց կը դիմէ՝ իր գիւտը

անոնց հաղորդելու համար: Բայց անոնք՝ աւելի կարեօր գործեր ունէին այդ վայրկեանին . . . Պատերա՛զմ՝ կրնէին անոնք՝ ժողովրդոց բարօրութեան և ամենամեծ երջանկութեան համար: . . . : Գիտնականը վեհապետներէն յուսահատեալ Ֆրանսայի ձէմարանին անդամոց կը ներկայացնէ իւր գիւտը, բայց գիտութեան քրմապետները « երեւակայական ցնորք մ'է այդ » կը պատասխանեն հնարողին՝ կարեկցական ծիծաղով մը . . . :

Երջանկաբար հնարողը հանրապետական ազատ երկրի մը վրայ կ'ապրէր, և հոն՝ այդ ազատութեան մէջ գտաւ՝ իւր գտղափարն իրացնելու միջոցները: Կաթսայ մը դրաւ նաւու մը վրայ, և ինչպէս երբեմն Յեսու՝ « կեցի՛ր » կը դռչէր արեգական ինքն ալ նաւուն հրամայեց. « գնա՛ » . այն ատեն՝ անմեկնելի անըմբռնելի տեսարան մը ներկայացաւ հանդիսականաց աչացը. նաւը այդ ողորմելի մարդուն հրամանին հընադանդելով կը շարժի, ջրերը կը ճեղքէ և կը քայլէ, հոսանքին դէմի, հսկերուն

դէմ , և նոյն խակ բնութեան դէմ :  
 Նոյն օրը Ֆիւլթօն ( այսպէս կը կոչուէր այն մեծ մարդը ) յաղթեց համայն աշխարհի , տարածեց իր բազուկները երկրիս բոլոր ժողովրդոց վրայ , և զանոնք այնքան մերձեցուց միմեանց , որ այսօր , արևելքէն յարևմուտս ճամբորդութիւն մը՝ Պոլսէն ի Վեյիւք Տէրէ , կամ Կղզիներ երթալու զուարճական շրջագայութեան մը չափ դիւրացաւ :

Պիզմարքներու , Կիյօմներու և ուրիշ աշխարհակալաց խօսքը կընեն մեզ . .  
 ահաւասիկ ճշմարիտ աշխարհակալը . . .  
 Ֆիւլթըն և իւր նմանիքն . . .

Եւ ի՞նչ բան մնաց մարդկութեան նըպաստաւոր վերջին մարդախոշոր պատերազմէն , հեղիկ և խաղաղ ժողովրդոց միմեանց ընդհարումէն . Կէս միլիօն մարդպահաս Եւրոպիոյ մէջ , Գերմանացի և Ֆրանսացի դիակներով պարարտացեալ դաշտեր , Գերմանացի Օպիւսներով և Քրիւքներով քանդեալ ու աւերեալ տուներ , ագարակներ , այգեստաններ , ու պալատներ : Տիեզերաց Մայրաքաղաքին՝ լուսա-

ծաւալն Փարիզու կործանումները և վերջապէս՝ Կիյօմի ի Բարիզ ըրած յաղթական այցելութիւնը և հոն ձգած այցետոմար , զոր քաղաքավարական կանոնաց համաձայն՝ Ֆրանսացիք՝ թերևս օր մը իրեն դարձընեն ի Պէրլէն՝ դարձեալ ի վսասմարդկութեան :

Եւ ի՞նչ են բոլոր ասոնք . Վառօդի ծուխով կառուցեալ շէնքեր , զորս դարուս հողմը խիստ չուտ կաներևութացնէ մեր աչացն ու երևակայութեան առաջէն :

Շագույ դիւտին վրայ էր խօսքերնիս :  
 Այս դիւտին յաջորդեց կազի դիւտը :  
 Արդ՝ եթէ հասարակաց կրթութիւնը մտաց լոյսն է , կազն ալ տակաւ առ տակաւ մեր աչքերուն լոյսը պիտի ըլլայ , դի երբ գիշերը վրայ հասնելով՝ արեգակը հորիզոնին ետև կը փախչի , կազը իւր փայլուն ճառագայթներովը՝ երկրորդ արշալոյս մը կը սփռէ մեր քարայտակաց վրայ :

Բայց կազին դիւտէն խիստ քիչ կ'օգտինք մեք դժբաղդաբար , զո՛ւրկ ենք մենք դեռ՝ այս մասին , ինչպէս ուրիշ կէտերու մէջ ալ . ընկերականութեան բա-

ըրբներէն և անհատականութիւնը կը տիրէ մեր մէջ :

Մենք գեռ պարտաւորած ենք, Բեռայէ 'ի զատ Պօլսոյ ամեն արուարձանաց մէջ, լապտեր 'ի ձեռին շրջագայել, գիշեր ատեն : Ասի անհատականութիւնն է, որուն տաճկերէն «ալան քէնտինէ» կրակնք, բայց խիստ անտեղի անհատականութիւն մը . . . : Ես գեռ կը յիշեմ այն օրը, յորում մենք, ինչպէս Պօլսեցւոց մեծադոյն մասը՝ հացը տունէն կը շինէին և կար առ տնն մ'ալ յորում ամեն ընտանիք առ հասարակ պարտաւորեալ էին՝ ոչ միայն հացերնին շինելու և եփելու, այլ և պարտէղնուն մէջ իրենց բանջարեղէնն ու պրտողները հասցընելու և տանը մէջ հաւեր և այլն պահելու, պէտք եղածատեն զըտնելու համար. և ասի՝ Պօլսէ միայն մէկ քանի ժամ հեռուները մինչև մեր օրերը գեռ կը տեսնենք: Իսկ այսօր հացադործութիւնն ու վաճառանոցները՝ այս անողուտ անհատկութեան հետ, շատ մը ընտանեկան անհանդուրժելի աշխատութիւններն ալ բառնարով մեր մայրերն ու հայրերը՝ իրենց

ղաւակաց քովը դարձուցին. և ընտանեկան կենաց քաղցրութիւնն աւելցուցին :

Այսպէս ահա օր մ'ալ պիտի գայ, և յուսամ թէ շատ հեռու չէ, այն օրը, յորում կազը ամեն տուներէ պիտի վանէ, պիտի արտաքսէ մամերն ու լամբաները, փայտն ու ամուխները, ինչպէս արդէն Ամերիկայի մէջ, ուր փոխանակ սօսպաներ կամ մանկանքներ վառելու, պատին մէկ անկիւնը դամուած փոքրիկ ծորակ մը՝ մուտը՝ խմբ միայն բանայը բառական է, սենեակից և տունից տարցունելու համար :

Եւ այս է ամենը — ո՛չ. կազէն վերջը՝ ելեքտրական հեռագրութիւնն եկաւ. Երկաթեայ պարզ թէլ մը ցիցի մը վրայ ձեղուած, մարդկային մտածութիւնները՝ մեր ամեն խօսքերը՝ օդն ու ծովերը ճեղքելով անհունութեան մէջէն կը տանի ու կը բերէ և հիմա՝ այս վայրկենիս, Լօնտրա Նիւեօրքի հետ կը խօսակցի, հարցումներ կընէ և պատասխանը կընդունի, միայն մէկ երկու ժամու մէջ . . . :

Ասո՛նք են ահա իննևտասերորդ դարուս գործած հրաշքերն ու կատարած

մեծագործութիւնները , որոնք ամեն դարէ աւելի՛ իրաւունք կուտան իրեն « Մեծ դար » կոչուելու :

Եթէ չը վախնայի նիւթէս շեղելէ , և խօսքս երկարելէ , կը ցուցընէի նաև թէ՛ դարուս կատարած նիւխական յառաջդիմութիւնները չ'են միայն , որ իրաւունք կուտան այս դարուս « մեծ դար » կոչուելու :

Վասն զի կա՛յ այնպիսի նիւթական յառաջադիմութիւն մը որ միանգամայն մտային յառաջադիմութիւն մը չ'ըլլայ : Կա՛յ բնաւ այնպիսի նիւթական յառաջադիմութիւն մը որ ՚ի սկզբան պարզ խորհուրդ մը , պարզ դաղափար մը եղած չ'ըլլայ :

Եւ մանաւանդ ներկայ դարուս մէջ , յորում , ինչպէս քիչ մը առաջ ըսինք , դատապարտեալ են այն ամեն աշխատութիւնք՝ որ իրենց առաջնորդ չունին միտքն ու հանճարը . պիտի դադրի՛ն բոլոր այն աշխատութիւնք որոց միակ առաջնորդն է՝ մեր զգիին և համայն Թուրքիոյ աղքատութեան նախապատճառ հինցած ու

փտած սա խօսքը « ես վարպետէս այսպէս տեսայ . . . » :

Բայց թերևս առարկողներ զըտնուին՝ թէ ասոնցմէ դուրս , արուեստներէ բարձրագոյն և արհեստից հետ անմիջական յարաբերութիւն կամ կիրառումն չ'ունեցող գիտութիւնք ալ կան դեռ :

Արդ ներկայ դարս այդ նկատմամբ ալ , իր բաժնին ընկած պարտքը ամենայն առաւօտաճեանութեամբ վճարած է :

Իննևտասերորդ դարն ստեղծեց երկրաբանութիւնը , մոնոլորտաբանութիւնը , բնախօսութիւնը , գործնական տարրալուծութիւնը , և վերջապէս պատմութեան փիլիսոփայութիւնը , որ կերպով մը՝ մեր ճակատադրին օրէնսդրութիւնն ըսել է :

Այս դարը մեծ է նաև , համաշխարային եղբայրական զգացմանց ծաւալման նկատմամբ : Եղբայրակցութեան սկզբունքը որ վերացեալ բա՛ւ մ'էր միայն , սրտերնուս մէջ արմատացուց . և եթէ չ'յաջողեցաւ թափանցել մինչև արիւնսրբու վե-

հապետաց և նոցա արբանեկաց սրտերը՝  
 գէթ ժողովրդային սովորութեան մը կար-  
 գը դասեց զայն : Պրանքօ—Բրուսիական  
 վերջին պատերազմի միջոցին, ժողովրդէ  
 առ ժողովուրդ տեղի ունեցած մարդա-  
 սիրական և եղբայրական ցոյցերն ու հա-  
 մազգային կարեկցական հաստատութիւն-  
 ները, ակներև ազաջոյցներ են մեր բարուց  
 այս մասին՝ անհամեմատ ամօքման :

Չը մոռնանք նաև՝ որ ներկայ դարս  
 եղաւ դե.րութիւնը վերջնական կերպիւ-  
 քազաքականացեալ աշխարհէս ջնջողը :

Քիչ տարիներ առ.աջ գերիներու  
 խումբեր կը տեսնուէին . դեռ՝ այն մեծ  
 հանրապետութեան մէջ՝ որու վրայ բարբ  
 աշխարհ կ'սքանչանայ : Եւ որքան տարօրի-  
 նակ հակապատկեր մը կը ներկայացնէր  
 նա՝ մեկ ձեռքը մարդկային իրաւունքը  
 բռնած, միւս ձեռքը խարաղան մը . . . :

Դարս այս անտեղութեան չէր հան-  
 դուրժեր, ուստի պէտք էր որ վերջանար  
 այս գաղանային սովորութիւնը, և վեր-  
 ջացաւ նա՝ ի շնորհս պարզ աշխատաւորի  
 մը՝ ի շնորհս պարզ փայտահատի մը՝ ու

րուն անունն էր « Լինգօլն » : Կան դեռ  
 գերիներ սպանիական մէկ երկու գաղ-  
 թականութեանց և Պրաղիլիոյ մէջ, կան  
 և Թուրքիոյ մէջ՝ ուր արդիւեալ է գե-  
 րեվաճառութիւնը, այլ այս ժամուս՝ հոս .  
 ինչպէս աշխարհիս ամեն կողմերը՝ օրհա-  
 սական կը նուազի այս անբնական սովո-  
 րութիւնը . և ներկայ դարս իւր վերջին  
 քնաք բարոյն ըսելէ առաջ, պիտի տես-  
 նէ անտարակոյս նորա յաւիտենականու-  
 թեան անդունդին մէջ գահալիժերն ու  
 անհետանալը :

Ահաւասիկ դարուս գործածները :  
 Ալ չե՛մ խօսիր մարդկային սրտի վրայ  
 նորա ըրած ազդեցութեանը նկատմամբ .  
 չե՛մ խօսիր դարուս մէջ հրատարակուիլ  
 սկսած լրագրաց վրայ, որոնք սրտի կըր-  
 թութեան առաջին գործիներն են, չե՛մ  
 խօսիր զանազան թաղերու մէջ հաստատ-  
 ուած ընկերութեանց վրայ՝ որոնք մտքե-  
 րու լուսաւորութիւնն ունին իրենց նպա-  
 տակ, չե՛մ խօսիր Անձնուէր Ընկերու-  
 թեան վրայ՝ որ Հայաստանի բարի հրեշ-  
 տակը պիտի ըլլայ, չե՛մ խօսիր աշխա-



տութեան կատարելագործմանը, անչափս նպատառը զանազան տեսակ ընկերութեանց վրայ, աշխատաւորաց նախախնամութիւնն կոչուելու արժան՝ միմեանց փոխադարձ օգնութեան նպատակաւ, կազմուած ընկերութեանց, և էմիլիէն սանսըլիներու վրայ, զորս նմանապէս ներկայ դարս ստեղծեց:

Արդարեւ այս եղբայրսիրական հաստատութիւնք՝ դեռ սկզբնաւորութիւնն ներ են, որոնցմէ խիստ քիչ կ'օգտինք մենք տակաւին: Ժամանակը զանոնք ալ կատարելագործելով, նորանոր հաստատութիւններ պիտի յառաջ բերէ ասոնցմէ, իրապէս նպատառող՝ մեր թշուառ ազգին այն մեծագոյն մասին, որն որ՝ ողբալով կ'ըսեմ, ամեն քաղցրութիւններէ ու վայելքներէ զուրկ, ժամանակիս բոլոր բեռը... իւր ուսոց վրայ կը կրէ, և մեզնէ կ'ոպատէ՝ ո՛չ միայն մտքի հացը, այլ, աւանդ, մարմնոյ հացն ալ . . .

Մենք կարող չենք, բաւական դաստիարակութիւն տալ այդ կարգերուն, մենք կարող չենք փրկութեան գործի մը

դնել նոցա ձեռաց մէջ:

Աշխատի՛նք ուրեմն ամենքս ալ այս մեծ գործին, հաստատուն հաւատով, բարի սրտով, առանց ատելութեան, առանց կրից, և առանց աղմկի, զի տղա՛ն կ'աղաղակէ, իսկ մարդը կը խօսի:

Վերջացնենք ալ այն ամեն անտեղի նուիրւններն ու հակաճառութիւնները՝ որոնք զմեզ ալ աւելի մասերու պիտի բաժնեն:

Վերջացնենք ալ դառերու, և տիրութեան թիւններու անտի մասայնները, որոնք զմեզ պառակտելէ ուրիշ բանի՛ մը չ'են օգտեր: Փորձենք ապագային խնդիրը լուծել, կամ նորա լուծումը նախապատրաստել. սիրելով զիրար, սիրելով մանաւանդ աշխատաւորները՝ որոնք պէտք է մեր ամենուն համակրութեան ընդհանուր ժամագրութեան վայրն ըլլան . . .

Եւ փա՛ռք երկնից, ալ հայր, ո՛չ լուսաւորչական ունի, ո՛չ բողոքական, ո՛չ հռոմէական ունի, և ո՛չ պապական:


Մեք ամենքս ալ Հայ Ժողովուրդն եմք. մեծ ընտանիք մ'եմք. Քրիստոսի

առանց կարի վերարկուն եմք : Այլ մեր մէջ  
բաժանմունք չըկա՛ն բնաւ : Բաժանմունք  
մեր դաղափարաց մէջ , մեր իտէականին  
մէջ միայն կան :

Եւ այսօ՛ր այս ժամու՛ս՝ չ'կայ բնաւ  
երիտասարդ հայ մայր մը՝ որ իր բաղկացը  
մէջ ազատութեան զինուոր մը , Հայրենա-  
սիրութեան ախոյեան մը չը կրէ :

ՕՀԱՆ







22864-22870

« Ազգային գրադարան

22868



NL0056510

« Ազգային գրադարան

22869



NL0056513

2013

« Ազգային գրադարան

22870



NL0056509

« Ազգային գրադարան

22865



NL0056512

« Ազգային գրադարան

22867



NL0056508

« Ազգային գրադարան

22864



NL0056511

« Ազգային գրադարան

22866



NL0056507

